Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
ապրիլի 17-ի N 450-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտ) աշխատանքային միգրանտների համար պետական աջակցության տրամադրման ընթացակարգերի, պայմանների և ժամկետների հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգով սահմանված հասկացությունները կիրառվում են «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի իմաստով:

3. Սույն կարգի իմաստով՝

1) աշխատանքային միգրանտ է համարվում «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները բավարարող՝ տնտեսավարող սուբյեկտի մոտ աշխատանքային կամ քաղաքացիական իրավական պայմանագրի հիման վրա մասնագիտական աշխատանք կատարող անձը, ում համար Հայաստանի Հանրապետությունում մինչև 2022 թվականի մարտի 1-ն աշխատանքի վարձատրության մասով եկամտային հարկ վճարված չէ.

2) պետական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) է համարվում աշխատանքային միգրանտների համար տնտեսավարող սուբյեկտին տրամադրվող ֆինանսական օժանդակությունը.

3) աջակցության համար դիմող է համարվում տնտեսավարող սուբյեկտը, այդ թվում՝ տնօրենը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրա կողմից լիազորված այլ անձը (այսուհետ՝ դիմող):

4. Աջակցության հաշվարկի իրականացման համար հիմք է ընդունվում աշխատանքային միգրանտի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով տնտեսավարող սուբյեկտի կողմից հաշվարկված եկամտային հարկի չափը, իսկ տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

5. Աջակցության տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունն իրականացվում է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից՝ մոնիթորինգի միջոցով:

6. Աջակցության տրամադրման գործընթացի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի հրամանով սահմանված կարգով:

2. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

7. Աջակցություն ստանալու իրավունք ունեն այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք բավարարում են սույն որոշման 2-րդ կետով սահմանված պահանջները և աջակցության համար հայցվող ժամանակաշրջանում ունեցել են մասնագիտական աշխատանք կատարող աշխատանքային միգրանտներ, ովքեր դիմելու օրվա դրությամբ նույն տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատողներն են:

8. Աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է հարկային մարմնի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում աշխատանքային միգրանտների վերաբերյալ առկա տեղեկատվության հիման վրա:

9. Աջակցության հայցվող հաշվետու ժամանակաշրջանը եռամսյակն է, որում ներառվող ամիսների համար եկամտային հարկի հաշվարկը տնտեսավարող սուբյեկտի կողմից պետք է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով ներկայացված լինի հարկային մարմին: Ընդ որում՝ հաշվետու եռամսյակը որևէ տարվա հունվար, ապրիլ, հուլիս կամ հոկտեմբեր ամիսների 1-ից մինչև տվյալ տարվա համապատասխանաբար մարտ, հունիս, սեպտեմբեր կամ դեկտեմբեր ամիսների վերջին օրը ներառյալ ժամանակահատվածն է:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

10. Տնտեսավարող սուբյեկտն աջակցություն ստանալու համար դիմում է ներկայացնում նախարարություն՝ համապատասխան հարթակի միջոցով:

11. Աջակցություն ստանալու դիմումները կարող են ներկայացվել եռամսյակի վերջին ամսվա հարկային հաշվարկների ներկայացման վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրվանից հետո՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Ընդ որում՝ դիմումները ներկայացվում են միայն դիմելու օրվան նախորդող եռամսյակի համար: Սույն ժամկետի ավարտից հետո նախորդ եռամսյակի համար դիմումներ չեն ընդունվում:

12. Դիմողը հարթակում նույնականանում է «Ես եմ» ազգային նույնականացման համակարգի միջոցով:

13. Նույնականացում անցնելուց հետո հարթակում առանձին քարտադարանով հասանելի կլինեն այն տնտեսավարող սուբյեկտները, որոնց մասով դիմողը կարող է ներկայացնել աջակցություն ստանալու դիմում:

14. Քարտադարանում առկա յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի անհատական էջում ինքնաշխատ եղանակով հասանելի կլինի տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և պետական եկամուտների կոմիտեում առկա տեղեկատվությունը, բացառությամբ քաղաքացիական իրավական պայմանագրի հիման վրա մասնագիտական աշխատանք կատարող աշխատանքային միգրանտների վերաբերյալ տեղեկատվության, որի մասով անհրաժեշտ տեղեկատվությունը հարթակում լրացվում է դիմողի կողմից:

15. Տնտեսավարող սուբյեկտն ինքնաշխատ եղանակով ստանում է տվյալ աշխատանքային միգրանտի համար հայցվող եռամսյակում հաշվարկված եկամտային հարկի մասին տեղեկատվությունը:

16. Նախքան սույն կարգի 15-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալը՝ հարթակն ինքնաշխատ եղանակով հետևյալ հերթականությամբ ստուգում է.

1) «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջը, այնուհետև՝

2) դիմումի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ դիմող տնտեսավարող սուբյեկտի՝ 100 հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների առկայությունը և դրա բացակայության դեպքում՝

3) տնտեսավարող սուբյեկտի տվյալ եռամսյակի շրջանառության հարկի կամ եռամսյակը ներառող բոլոր ամիսների ավելացված արժեքի հարկի հարկային հաշվարկներում հայտարարագրած տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների համապատասխանությունը Կառավարության կողմից ըստ տնտեսական գործունեության դասակարգիչների սահմանված՝ Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակների հետ և դրա համապատասխանության դեպքում՝

4) տնտեսավարող սուբյեկտի աշխատողներից ընտրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության չունեցող աշխատակիցներին, այնուհետև՝

5) պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների տվյալների շտեմարանից ընտրվում են այն աշխատողները, ովքեր զբաղվում են Կառավարության սահմանած ցանկում ներառված զբաղմունքներով, այնուհետև՝

6) պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների տվյալների շտեմարանից ընտրվում են այն աշխատակիցները, որոնց համար մինչև 2022 թվականի մարտի 1-ը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի դիմաց վարձատրություն չի տրվել ու եկամտային հարկի մեծության վերաբերյալ չկա որևէ տեղեկատվություն:

17. Սույն կարգի 16-րդ կետով սահմանված հարցումների իրականացման արդյունքում հարթակն ինքնաշխատ եղանակով հաշվարկում և ներկայացնում է աշխատանքային միգրանտի՝ Կառավարության սահմանած ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվելու ամիսների համար հաշվարկված եկամտային հարկի 60%-ի չափով աջակցության հնարավոր գումարի չափը:

18. Աջակցության ստացման նպատակով դիմողը պարտավոր է հարթակում լրացնել պարտադիր լրացման ենթակա դաշտերը, իսկ ոչ պարտադիր լրացման դաշտերը՝ կարող է լրացնել իր հայեցողությամբ:

19. Դիմողը հնարավորություն ունի անձնական էջում կատարելու խմբագրումներ, փոփոխություններ, վերադառնալու նախորդ դաշտեր, պահպանելու կատարած խմբագրումներն ու փոփոխությունները:

20. Աջակցության ստացման դիմումի ներկայացման ընթացքն ավարտվում է լրացված դաշտերի (ներկայացված տեղեկատվության) հաստատումով, որը ենթադրում է դիմողի համաձայնությունն իրեն հասանելիք և ստացման ենթակա աջակցությանը, իսկ բողոքարկման դեպքում՝ համապատասխան վարչական ակտի ընդունմամբ: Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտի կողմից ստացման ենթակա աջակցության՝ այդ թվում սույն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածներով սահմանված, հանրագումարը չի կարող գերազանցել նույն հաշվետու ժամանակաշրջանի մասով տվյալ տնտեսավարող սուբյեկտի բոլոր աշխատողների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 50%-ը:

21. Դիմողը սույն կարգի 20-րդ կետով սահմանված դիմումի հաստատումից հետո այն հարթակի միջոցով ներկայացնում է նախարարություն՝ վճարման:

22. Դիմողի կողմից «հաստատված» և «վճարման հանձնված» կարգավիճակում գտնվող հայտերը հարթակում ենթակա չեն փոփոխման կամ խմբագրման:

23. Տնտեսավարող սուբյեկտի դիմումը մերժվում կամ հաստատվում է: Մերժման դեպքում հարթակում դիմողին են ներկայացվում մերժման հիմքերը կամ պատճառները:

24. Դիմումը հաստատվելուց հետո աջակցության գումարը փոխանցվում է տնտեսավարող սուբյեկտի բանկային հաշվեհամարին ոչ ուշ, քան դիմելու օրվան հաջորդող եռամսյակի առաջին ամսվա վերջին աշխատանքային օրը:

4. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

25. Հարթակում տնտեսավարող սուբյեկտը կարող է բողոքարկել աջակցության դիմումի պատասխանը:

26. Բողոքարկման դիմումը նախարարության կողմից քննվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

27. Բողոքարկման արդյունքում բավարարվում կամ մերժվում է բողոքը, տրվում են պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում, կատարվում են աջակցության գումարի չափի վերահաշվարկներ:

28. Բողոքարկման դեպքում, եթե ճշգրտվում է աջակցության գումարը, ապա բողոքարկման վերաբերյալ որոշում կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կատարվում է աջակցության վերահաշվարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ